



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

«ԱՆՏԻՖԵՅՔ» ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ  
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փողոց 1/27  
Էլ. փոստ՝ antifakeam@gmail.com

Ի պատասխան Ձեր 03.12.2019թ.-ի թիվ 0130-19 գրությանը

Հարգելի տիկին Մաթևոսյան

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացված «Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2019 թվականին մարզպետարանի բոլոր աշխատակիցներին տրամադրվել են պարզևատրումներ: 2019 թվականի բյուջեով վերը նշված հոդվածով նախատեսված է 93190.5 հազ. դրամ, փաստացի ծախսը 2019 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 76346.0 հազ. դրամ: Առաջին վճարումը կատարվել է ապրիլ ամսին՝ առաջին եռամսյակում հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, որից հետո վճարումները կատարվել են յուրաքանչյուր ամիս՝ բյուջեով նախատեսված գումարներին համապատասխան: Պարզևատրումները վճարվել են աշխատակիցներին ոչ հավասարաչափ, հաշվի են առնվել նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը և տրված հանձնարարականների կատարման արդյունավետությունը: Պարզևատրման չափը կազմել է հիմնականում աշխատողների դրույքաչափի 20-30 տոկոսի սահմաններում: Մյուս աշխատակիցների հետ միասին նույն կարգով պարզևատրվել են նաև մարզպետի օգնականները և խորհրդականները:

Ինչ վերաբերվում է մարզպետին և փոխմարզպետին վճարված պարզևատրման չափի մասին, ապա այն իրականացվել է գաղտնի ընթացակարգով, ուստի նման տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերը նշված պաշտոնատար անձինք ներկայացնում են գույքի և եկամուտների հայտարարագիր, ուստի վճարված պարզևատրման չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ ներկայացվող հայտարարագրերից:

2019 թվականին պետական բյուջեից ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացված «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարզևատրում» հոդվածով

նախատեսված գումարների հաշվին մարզպետարանի քաղաքացիական ծառայողները համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի կիսամյակի կատարողականների արդյունքների հիման վրա պարգևատրվել են նաև հունվար և հուլիս ամիսները: Վերը նշված հոդվածով կատարված ծախսը կազմում է 36890.7 հազ. դրամ: Նշված պարգևատրումը քաղաքացիական ծառայողներին վճարվում է դեռևս 2002 թվականից:

Հարգանքով՝

 Invalid signature

X 

ԱՆՂԻՅՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ